ԱՐԲԻՏՐԱԺ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՊԱՀԱՆՋԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵ

ԱՐԲԻՏՐԱԺԻ ԵՎ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ԳՈՐԾ

[ՀԱՅՑՎՈՐԻ ԱՆՈՒՆԸ]

(ՀԱՅՑՎՈՐ)

ԵՎ

[ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻ ԱՆՈՒՆԸ]

(ՊԱՏԱՍԽԱՆՈՂ)

ՄԻՋԵՎ

# ԱՐԲԻՏՐԱԺ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՊԱՀԱՆՋ

*[Արբիտրաժ իրականացնելու պահանջի ամսաթիվը]*

# I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Արբիտրաժ իրականացնելու սույն պահանջը ներկայացվում է [հայցվորի անունը/անվանումը] (այսուհետ՝ հայցվոր) անունից, Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի Արբիտրաժային կանոնների (այսուհետ՝ Արբիտրաժային կանոններ) 5-րդ հոդվածի համաձայն, ընդդեմ [պատասխանողի անունը/անվանումը] (այսուհետ՝ պատասխանող, միասին՝ կողմեր):

2. Արբիտրաժ իրականացնելու սույն պահանջը պարունակում է տեղեկություններ հետևյալի վերաբերյալ.

   i. Կողմերից յուրաքանչյուրի անունը/անվանումը, կոնտակտային տվյալները և հասցեն (II)

   ii. Պահանջների հիմքում ընկած վեճի բնույթի և փաստական հանգամանքների նկարագրությունը (III),

   iii. Վեճի լուծման վերաբերյալ արբիտրաժային վերապահումը, կիրառելի իրավունքը, դրույթներ արբիտրաժի վայրի և լեզվի վերաբերյալ (կողմերի միջև կնքված համաձայնությունը և վերաբերելի այլ համաձայնություններ) (IV)

   iv. Արբիտրաժային տրիբունալի ձևավորման կարգը (V)

   v. Հայցապահանջ (VI)

   vi. Հայցվորի կատարած վճարները (VII)



Երևան, 0023, Արշակունյաց պող. 51, տարածք 47
www.amca.am
Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն

## II. ԿՈՂՄԵՐԸ

### Ա. Հայցվոր

3. Հայցվորի տվյալներն են.

[Հայցվորի լրիվ անունը/անվանումը]
[Հայցվորի հասցեն/իրավաբանական հասցեն]
[Հայցվոր ֆիզիկական անձի անձնագրային տվյալները/իրավաբանական անձի դեպքում՝ ՀՎՀՀ-ն, պետական գրանցման համարը (առկայության դեպքում)]
[Հայցվոր կազմակերպության տնօրենի անունը (միայն իրավաբանական անձանց պարագայում)]
[Հայցվորի հեռախոսահամարը]
[Հայցվորի էլեկտրոնային փոստի հասցեն]
[Հայցվորի համար ծանուցումների նախընտրելի միջոցը և ծանուցման համար անհրաժեշտ տեղեկությունը]

4. Հայցվորի ներկայացուցչի (առկայության պարագայում) տվյալներն են.

[Հայցվորի ներկայացուցչի անունը]
[Հայցվորի ներկայացուցչի հեռախոսահամարը]
[Փաստաբանական արտոնագրի համարը]
[Հայցվորի ներկայացուցչի էլեկտրոնային փոստի հասցեն]
[Այլ տեղեկություններ]

*[Լրացուցիչ տվյալներ՝ անհրաժեշտության դեպքում]*

### Բ. Պատասխանող

5. Պատասխանողի տվյալներն են.

[Պատասխանողի լրիվ անունը/անվանումը]
[Պատասխանողի հասցեն/իրավաբանական հասցեն]



*Երևան, 0023, Արշակունյաց պող. 51, տարածք 47*
*www.amca.am*
Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն

[Պատասխանող ֆիզիկական անձի անձնագրային տվյալները/իրավաբանական անձի դեպքում՝ ՀՎՀՀ-ն, պետական գրանցման համարը (առկայության դեպքում)]

[Պատասխանող հանդիսացող կազմակերպության տնօրենի անունը (միայն իրավաբանական անձանց պարագայում)]
[Պատասխանողի հեռախոսահամարը]
[Պատասխանողի էլեկտրոնային փոստի հասցեն]

## III. ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՀԻՄՔՈՒՄ ԴՐՎԱԾ ՎԵՃԻ ԲՆՈՒՅԹՆ ՈՒ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

### Ա. Նախապատմություն և փաստական հանգամանքներ

6. [Ներկայացրե՛ք պատասխանողի այն գործողությունները (անգործություն), որ առաջացրել են արբիտրաժ իրականացնելու սույն պահանջում ներկայացվող կետերը]

### Բ. Պահանջի իրավական հիմքը

7. [Ներկայացրե՛ք պատասխանատվության հիմքը՝ պայմանագրային կամ այլ]

### Գ. Պատասխանողի՝ պարտավորությունների խախտումը

8. [Ներկայացրե՛ք պատասխանողի՝ պարտավորությունների խախտումը]

[Ներկայացրե՛ք հայցվորի կրած վնասը, որն առաջացել է պատասխանողի՝ պարտավորությունների խախտման փաստի հիմքով]

Հայցվորի կրած վնասի ընդհանուր չափը կազմում է [ավելացրե՛ք վնասի չափը]:

## IV. ՎԵՃԻ ԼՈՒԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՎԵՐԱՊԱՀՈՒՄԸ, ԿԻՐԱՌԵԼԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ, ԱՐԲԻՏՐԱԺԻ ԼԵԶՈՒՆ ԵՎ ՎԱՅՐԸ

### Ա. Արբիտրաժային վերապահումը

9. Արբիտրաժ իրականացնելու սույն պահանջի կապակցությամբ

արբիտրաժային վարույթը նախաձեռնվում է՝ հիմք ընդունելով կողմերի միջև առկա արբիտրաժային համաձայնությունը [կցված], որը նախատեսում է ….:

10. [ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ: Որոշ դեպքերում արբիտրաժային վարույթը կարող է նախաձեռնվել միայն այն պարագայում, երբ հայցվորը նախքան Արբիտրաժ իրականացնելու պահանջի ներկայացումը կատարել է համաձայնությամբ ստանձնած որոշ պարտավորություններ, օրինակ՝ փորձել է վեճը լուծել բանակցությունների կամ այլ խաղաղ եղանակով: Այդպիսի դեպքում ներկայացրե՛ք համապատասխան ապացույցներ առկա պայմանները պահպանելու վերաբերյալ]

### Բ. Արբիտրաժի վայրը

11. Ըստ արբիտրաժային համաձայնության [նշե՛ք արբիտրաժային համաձայնության այն հոդվածը, որտեղ նախատեսված է արբիտրաժի վայրը] հոդվածի՝ արբիտրաժի վայրն է՝ [նշե՛ք քաղաքը և պետությունը]:

12. [ՆՇՈՒՄ: Հայցվորը կարող է ավելացնել արբիտրաժի վայրի վերաբերյալ ցանկացած այլ նկատառում]

### Գ. Կիրառելի իրավունքը

13. Արբիտրաժային համաձայնությունը կարգավորվում է [նշե՛ք՝ որ երկրի իրավունքն է կիրառվում պայմանագրի նկատմամբ] օրենսդրությամբ՝ ըստ [նշե՛ք արբիտրաժային համաձայնության հոդվածը, որտեղ դա ներկայացված է], որը սահմանում է հետևյալը.

[Ամբողջությամբ նշե՛ք այն դրույթները, որտեղ սահմանված է կիրառելի իրավունքը]

14. [ՆՇՈՒՄ: Հայցվորը կարող է ավելացնել կիրառելի իրավունքի վերաբերյալ ցանկացած այլ նկատառում]

### Դ. Արբիտրաժի լեզուն

15. Ըստ արբիտրաժային համաձայնության [նշե՛ք արբիտրաժային համաձայնության հոդվածը, որտեղ նշված է արբիտրաժի լեզուն] հոդվածի՝

արբիտրաժի լեզուն [ավելացրե՛ք արբիտրաժի լեզուն] է։

16. [ՆՇՈՒՄ։ Հայցվորը կարող է ավելացնել արբիտրաժի լեզվի վերաբերյալ ցանկացած այլ նկատառում]

## V. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՏՐԻԲՈՒՆԱԼԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ [ՆՇՈՒՄ: ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ 14-ՐԴ ՀՈԴՎԱԾ]

17. Ըստ արբիտրաժային համաձայնության [նշե՛ք արբիտրաժային համաձայնության հոդվածը, որը նախատեսում է տրիբունալի ձևավորման կարգ] հոդվածի՝ [ներկայացրե՛ք համաձայնության մեջ առկա դրույթները՝ տրիբունալի ձևավորման վերաբերյալ, ներառյալ արբիտրների թիվը, եթե նշված է արբիտրաժային վերապահման մեջ, և նշանակման կարգը։]

*[ՆՇՈՒՄ: Եթե կողմերը նախկինում համաձայնության չեն եկել արբիտրաժային տրիբունալի կազմի շուրջ, հայցվորը պետք է առաջարկներ ներկայացնի արբիտրների թվի, նշանակման կարգի և ընտրության վերաբերյալ՝ Կանոնների 13-րդ և 14-րդ հոդվածների դրույթներին համապատասխան]*

18. [ՆՇՈՒՄ: Այն պարագայում, երբ արբիտրաժային համաձայնությունը նախատեսում է մեկ արբիտրից բաղկացած արբիտրաժային տրիբունալի ձևավորում]
Ըստ [նշե՛ք արբիտրաժային համաձայնության այն դրույթը, որը նախատեսում է տրիբունալի ձևավորումը] և Արբիտրաժային կանոնների 14-րդ հոդվածի՝ հայցվորն առաջադրում է [առաջարկվող միանձնյա արբիտրի անունը]՝ որպես միանձնյա արբիտրի, հաստատման համար: Ըստ հայցվորի իմացության՝ [առաջարկվող արբիտրի անունը] անկախ է սույն արբիտրաժային գործում ներգրավված կողմերից: [Առաջադրված արբիտրի անունը] կոնտակտային տվյալները հետևյալն են.

[Միանձնյա արբիտրի անունը]
[Միանձնյա արբիտրի հասցեն]
[Միանձնյա արբիտրի հեռախոսահամարը]
[Միանձնյա արբիտրի էլեկտրոնային փոստի հասցեն]

19. [ՆՇՈՒՄ: Այն պարագայում, երբ արբիտրաժային համաձայնությունը նախատեսում է երեք արբիտրներից բաղկացած արբիտրաժային տրիբունալի ձևավորում]

20. Ըստ [նշե՛ք արբիտրաժային համաձայնության այն դրույթը, որը նախատեսում է տրիբունալի ձևավորումը] և Արբիտրաժային կանոնների 14-րդ հոդվածի՝ հայցվորն առաջադրում է [առաջարկվող համաարբիտրի անունները]՝ որպես արբիտրների, հաստատման համար: Ըստ հայցվորի իմացության՝ [առաջարկվող արբիտրների անունները] անկախ են սույն արբիտրաժային գործում ներգրավված կողմերից: [Առաջադրված արբիտրների անունները] կոնտակտային տվյալները հետևյալն են.

[Արբիտրի անունը]
[Արբիտրի հասցեն]
[Արբիտրի հեռախոսահամարը]
[Արբիտրի էլեկտրոնային փոստի հասցեն]

[Արբիտրի անունը]
[Արբիտրի հասցեն]
[Արբիտրի հեռախոսահամարը]
[Արբիտրի էլեկտրոնային փոստի հասցեն]

[Արբիտրի անունը]
[Արբիտրի հասցեն]
[Արբիտրի հեռախոսահամարը]
[Արբիտրի էլեկտրոնային փոստի հասցեն]

## VI. ՀԱՅՑԱՊԱՀԱՆՋ

21. Այսպիսով, հայցվորը խնդրում է արբիտրաժային տրիբունալին կայացնել վճիռ հետևյալի մասին.

i. Արբիտրաժային տրիբունալն իրավասու է քննելու կողմերի միջև առկա սույն վեճը:

ii. Պատասխանողը խախտել է իր պարտավորությունները,



Երևան, 0023, Արշակունյաց պող. 51, տարածք 47
www.amca.am
Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն

մասնավորապես՝ [նկարագրե՛ք պատասխանողի պատասխանատվության հիմքը]:

iii. Պատասխանողին պարտավորեցնել փոխհատուցել հայցվորի կրած այն վնաս(ներ)ը և/կամ կորուստ(ներ)ը, որ պատասխանողը պատճառել է պայմանագրի խախտման հետևանքով: Գնահատվում է՝ [հայցվորի կրած վնասի գնահատումը]:

iv. Պատասխանողին պարտավորեցնել կատարել արբիտրաժային վարույթին առնչվող բոլոր վճարները, ներառյալ հայցվորի ներկայացուցչի ծախսերը:

v. [Հայեցողական] Պարտավորեցնել պատասխանողին վճարել [նշե՛ք պայմանագրով նախատեսված տոկոսների չափը]՝ սկսած վճարման պարտավորության առաջանալու պահից մինչև վճարում կատարելու պահը՝ համաձայն [նշե՛ք իրավական հիմքը]:

vi. Հայցվորը պահպանում է ցանկացած պահանջ ներկայացնելու իր իրավունքը, որ բխում է արբիտրաժ իրականացնելու սույն պահանջում նկարագրված վիճելի հարցերից կամ առնչվում է դրանց կամ այլ կերպ ծագել կամ կարող է ծագել կողմերի միջև:

vii. Փոփոխել կամ լրացնել ներկայացված հայցապահանջը:

viii. Ներկայացնել այնպիսի փաստական կամ իրավական փաստարկներ և/կամ ապացույցներ (ներառյալ վկաների ցուցմունքները, փորձագետի եզրակացությունները և այլ փաստաթղթեր), որոնք կարող են անհրաժեշտ լինել գործը ներկայացնելիս կամ պատասխանողի ներկայացրած ցանկացած գործ հերքելու համար:

ix. Դիմել հայցի ապահովման միջոցներ կիրառելու միջնորդությամբ այս արբիտրաժային տրիբունալին կամ որևէ իրավասու ազգային դատարանի:

## VII. ՎՃԱՐՆԵՐԸ

22. Համաձայն Արբիտրաժային կանոնների հավելված 1-ի՝ հայցվորը ներկայացնում է …. ՀՀ դրամի չափով արբիտրաժային վճարները կատարած լինելու մասին ապացույց:

Հարգանքով՝

[Հայցվորի և/կամ ներկայացուցչի անունը]

[Հայցվորի և/կամ ներկայացուցչի ստորագրությունը]

[ԿԱՄԸՆՏՐԱԿԱՆ]
ԿԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՒՄ Է

| | Փաստաթղթի տեսակը/մանրամասները | Էջերի քանակը |
|---|---|---|
| 1. | [·] | |



*Երևան, 0023, Արշակունյաց պող. 51, տարածք 47*
*www.amca.am*
Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն